ւոյն Բեթղեհէմի, եւ կամէին սկիզբն առնել շինութեան անդ, նաեւ 'ի Տաճարին Ս. Յարութեան, զորոյ հրամանն ունէին 'ի ձեռին, և կատարել զթերի մնացեալ սպասս եկեղեցւոյն Համբարձման. բայց Յոյնք յամենայնի հակառակ կացեալ ոչ տային թոյլ մերձենալ 'ի նոյն տեղիս. որսացեալ էին նաեւ 'ի կողմն իւրեանց զԴատաւորն եւ զամենս յայլազգեաց Երուսաղէմի։ Յայսպիսի պարագայս պաշարեցան Հայք 'ի տարակուսանս յամենայն կողմանց, եւ ոչ կարէին դատանել զելս հնարից, զի Լատինք ստիպէին քակել զշինուածս Համբարձման, և Յոյնք ընդդէմ զինէին Արքունի հրովարտակաց, յոյր սակս հարկ եղեւ Պօղոս Եպիսկոպոսի առաքել զԴաւիթ վարդապետ յԱղէքսանդրիա կարեւոր գրեամբք առ Պօղոս Պէյ Եուսուֆեան, զի թերեւս մարթասցի հնարս դատանել և բառնալ զհակառակութիւնս երկուց ազգաց։

Սակայն չեւ եւս մեկնեալ Դաւիթ վարդապետի 'ի Յոպպէ Քաղաքէ՝ լուաւ անդ 'ի Տեսչէ Լատինաց և յայլոց զբանալ փակեալ դրան Լատինաց 'ի Բեթղեհէմ, յորմէ զանգիտէր գնալ յԵգիպտոս, զի գուցէ կրեցից ասէ՝ անարգանս և պարսաւանս 'ի Բդեշխէն և 'ի Պօղոս Պէյէն, այլ 'ի քաջալերելն զնա Պօղոս Եպիսկոպոսի, կալաւ զճանապարհ իւր։

Իսկ Դեսպանն Գազղիոյ 'ի Կոստանդինուպոլիս անդադար թախանձէր զԴուռն վասն բացման դրան այնորիկ, որպէս թէ՝ նեղութիւն մեծ լինէր Եւրոպական ուխտաւորաց եւ կղերաց նոցին, և Տէրութիւնն ունէր յայնժամ բարեկամութիւն ընդ Գազղիացիս, և բարկացեալ իսկ էր 'ի վերայ Հայոց 'ի սկզբանէ անտի, զի առանց հրամանի նորին, միայն Հէօճմէթի շէրիով փակեցին զայն, որոյ վասն ետ հրաման բանալ զայն, չհայեցեալ յինչ և իցէ պատճառս և 'ի վնասս։ Եւ ըստ այնմ գրեաց և Փոխարքայն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի առ Դատաւորս Երուսաղէմի՝ ընդ նմին առաքելով և զպատճէն հրամանագրոյն Արքայի։ Յետ այնորիկ Քաղաքապետն, Դատաւորն և Գլխաւորք այլազգեաց, եւ Լատինք, եւ 'ի Հայոց Պօղոս Եպիսկոպոս և այլք, գնացին 'ի Բեթղեհէմ, և քակեալ բացին զփակեալ դուռն զայն և շինեալ ետուն զբանալի նորին 'ի ձեռս Լատինաց, և սահ-